№ 4 Յունվարի 18 (30) 1880 Յունվարի 18 (30) № 4

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## „ՄՇԱԿ“
## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
## 1880 թվին

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարվան 6 ռուբլի։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսանողական ճաշ։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Բօրերտսոն, Բօլց և Կամսար Տէր-Դաւթեան։

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՇ

Յունվարի 12-ին Թիֆլիսի ուսում աւարտած և ուսում չաւարտած այլ և այլ ազգութիւններին պատկանող ռուս համալսարանների հին ուսանողները, թուով մի քանի հարիւր մարդ հաւաքվեցին տեղիս Հայոց անուանված կլուբի դահլիճում և մարգաղլուխ 8 ռուբլ ստորագրվելով ճաշ կերան։ Ճաշի ժամանակ գեղեցիկ ճառեր խօսեցին, կերակուրներ կերան, գինի խմեցին և վերջը պար եկան։ Բայց մի և նոյն ժամանակ և մի երեւելի բարի գործ էլ կատարեցին մեր բարձրագոյն ուսում ստացածները, այն է այսքան մարդիկ, բոլորն էլ լաւ ապահոված մարդիկ, մինը աստիճանաւոր, միւսը փաստաբանը, երրորդը բանկիր, չորրորդը բժիշկ, որոնք իրանց փորի վրա ծախսեցին մի երկու երեք հազար ռուբլ, հաւաքեցին չքաւոր ուսանողների համար ընդամենը 700 ռուբլ։

Փառք և պատիւ մեր ինտելիգենցիային։

Մոռացանք ասել թէ ինչ առիթով էր յիշեալ ճաշկերոյթը։ դա Մօսկվայի, Ռուսաստանի ամենահին համալսարանի գոյութեան 125 տարվայ տարեդարձն էր....

Կարծում ենք որ ինտելիգենցիայից կարելի էր սպասել որ նա այդ տեսակ հանդիսաւոր օրը մի աւելի նշանաւոր մարդասիրական գործով տօնէր։ Թող դարձեալ չքաւոր ուսանողների համար լինէր նշանակած հաւաքված դրամը, բայց արդեօք ծիծաղելի չէ, երբ մարդը տեսնում է որ այդքան գեղեցիկ ճառեր ասող ինտելիգենցիան ծախսում է իր փորի վրա մինչև 3000 ռուբլ իսկ չքաւոր ուսանողների համար այդ բոլոր ապահովված և մի ժամանակ ուսանող եղած մարդիկ կարողացան հաւաքել միմիայն 700 ռուբլ։

Եւ տեղական ռուսաց լրագրութիւնը հիացած է այդ հացկերոյթից, մանաւանդ «Обзоръ» լրագիրը։

Գոնէ այդ պարոնները այդ հանդիսաւոր առիթից օգուտ քաղէին մի մեծ գումար հաւաքելու համար, որ կը դառնար մի մշտական ընկերութեան մայր-գումար, որի տոկոսներից մշտապէս մի

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՐՕԲԷՐՏՍՏՕՆ, ԲՕԼՑ ԵՒ ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑ

—

Մեր ընթերցողները, երևի, յիշում են, որ անցեալ տարուայ «Մշակի» № 189 մենք քննելով պ. Կամսար Տէր-Դաւթեանցի „Русское Слово“ դասագիրքը, ցոյց տուեցինք, թէ որքան կարող է ծառայել այդ դասագիրքը այն նպատակին, որի համար աշխատասիրած է։ Ամեն մէկը կարդալով մեր յօդուածը, մեր կարծիքով, կարող էր ասել՝ եթէ Կովկասեցու „Рус. Слово“ գրքին վերաբերեալ խօսքերը ճիշդ են, մինչև անգամ չարժէր այդ դասագիրքը քննել, որովհետև ամեն մի փոքր ի չատ հասկացող մարդ վերցնելով ձեռքը պ. Տէր-Դաւթեանցի դասագիրքը առանց դժուարութեան և առանց լրագիրների օգնութեան կարող է գնահատել նորան։ Ուղիղ ասած, մենք ևս նոյն կարծիքի էինք, երբ առաջին անգամ սեր ձեռքն ընկաւ «Рус. Слово»։ Եթէ ամեն մի յիմար յօդուած, ամեն մի յիմար դասագիրք ենթարկուելու լինէր քննութեան, այն ժամանակ միայն այդ նպատակով հրատարակուած ամենօրեայ թերթ հաղիւ թէ կարողանար արդարացնել իրա նպատակը, վասն զի մեզանում անճոռնի, յիմար յօդուածներին և գրքերին չափ ու սահման չը կայ.... Ես, ասում եմ, աւելորդ կը համարէի „Рус. Слово“ դասագրքի քննութեան վրա ժամանակ կորցնել, եթէ մի պայման չը լինէր, այն է, որ այդ դասագիրքը յաճուութեամբ պ. Թեմական տեսչի ընդունված է Վրաստանի և Իմէրէթի հայոց բոլոր ծխական ուսումնարաններում։ Ահա ինչ էր պատճառը, որ մենք մեր սրբազան պարտք համարեցինք թէ հասարակութեան և թէ այժմեան պ. Թեմական տեսչի ուշադրութիւնը դարձնել պ. Տէր-Դաւթեանցի դասագրքի վրա։ Այդ յօդուածը գրելուց յետոյ անցնում է մի քանի շաբաթ։ «Մեղու Հայաստանի» անցեալ տարուայ №№ 96 կամ 97 բանասիրական բաժնում կարդում ենք «Մի քանի նկատողութիւններ անաչառ կրիտիկոսին» վերնագրով պ. Դ. Ս-ի յօդուածը։ Այդ յօդուածով պ. Դ. Ս. կամենում է իրը թէ ցոյց տալ, որ պ. Տէր-Դաւթեանցի „Рус. Слово“ շատ լաւ դասագիրք է, որ պ. Տէր-Դաւթեանցը ճշգրիտ է հետևել է Բօբէրտսօնի և Բօլցի մէթոդին. որ գրքի երկրորդ բաժնի՝ բոլոր 29 դասերը միակերպ չեն, այլ առաջին դասից մինչև 17-դ ուրիշ է, իսկ 17-ից մինչև վերջ ուրիշ. որ պ. Տէր-Դաւթեանցը ընդամենը հաղիւ 5 երես է վեր առել Ուշինսկու „Род. слово“-ից, իսկ մնացածները Պաուլսոնից, Շոպենից և այլն, որ Ուշինսկու „Род. Слово“ գրքի մէջ ոչ մի կապ չունեն գրաւոր վարժութիւնները ընթերցանութեան յօդուածների հետ, իսկ պ. Տէր-Դաւթեանցի դասագրքի մէջ նորա նախընթաց յօդուածների հետ մեծ կապ ունեն, որ «Рус. Слово» ունի նպատակ հայ մանուկներին որքան կարելի է շուտով սովորեցնել հեշտութեամբ իրանց օտար ռուսերէն բարբառը և խօսեցնել այդ լեզուով, իսկ „Род. Слово“ ունի նպատակ ռուս մանուկներին զարգացնել իրանց մայրենի լեզուով, սովորեցնել նոցա մտածել, հարստացնելով և մաքրելով նոցա մայրենի լեզուն, որ գրքի գինը շատ չէ։ Այս ամենը հաստատելու համար պ. Դ. Ս-ին հարկաւորուեցաւ ասել, որ Կովկասեցին ա չ ք ա կ ա ց ա ծ է, անագնիւ է, նա իր գիտութիւնը քաղում է Ֆատուրովի լամպերի միջից, Կովկասեցին կամեցել է միայն գրքի անունը կոտրել, ծանօթ չը լինելով նորա հետ (պ. Դ. Ս., դուք չէք կորցրել այս խօսքերի նշանակութեան զգալու ընդունակութիւնը) և այլն և այլն

Մենք ի հարկէ երբէք չէինք պատասխանի պ. Դ. Ս-ին, որի յօդուածը ոչ թէ ճշմարտութիւն պաշտպանելու ցանկութեան հետևանք է (մենք այդ կը հաստատենք ներքև), այլ գուցէ և իր մօտիկ բարեկամի, պ. Տէր-Դաւթեանցի, շահերի պաշտպանելն է։ Մենք չէինք պատասխանի պ. Դ. Ս-ին, ասում ենք, եթէ մենք չը գիտենայինք, որ հայ ընթերցողներից շատերին կարելի է մոլորեցնել մի քանի գիտնականների լոկ անուններ յիշելով, ինչպէս անում են պ. Դ. Ս. և նորա նմանները։ Ընթերցողներից շատերին գուցէ յայտնի է, որ պատահում են մի տեսակ մարդիկ, որոնք, իրանք ոչինչ ուսում առած չը լինելով, ուզում են իրանց ձեռնունել երևելի գիտնականներ։ Այդ տեսակ պարոններ, խօսակցութեան ժամանակ, հազար ու մէկ գիտնականի անուն են յիշում (որ պատահմամբ լսել են), կամենալով իրը թէ իրանց առաջ բերած դատողութիւնները հաստատել, մի քանի լատիներէն խօսքեր են մէջ գցում, աշխատում են ցոյց տալ, որ հակառակ կողմը ոչնչից տեղեակ չէ և այլն և այլն։ Այդ տեսակ պարոնները կազմում են մի որոշեալ տիպ։

Մենք կարող ենք ցուցել միայն, որ այդ տիպը յայտնուում է և մեր գրականութեան մէջ։ Պ. Դ. Ս. նոյն իսկ տիպն է, ինչպէս կը տեսնէ ընթերցողը։ Այժմ մենք շատ ուրախ ենք, որ միջոց ունենք ծանօթացնել մեր ընթերցողներին այդ տիպի հետ, հէնց դրա համար ենք գլխաւորապէս այս անգամ վերցնում գրիչը ձեռք։

Այդպիսի պարոնները նախ և առաջ ուզում են ցոյց տալ իրանց անկողմնապահութիւնը որոշեալ հարցերի վրա վիճելու ժամանակ։ Եթէ դուք վիճում էք որ և իցէ պարոնի հետ, ի հարկէ դուք աւելի անկողմնապահ կարող էք լինել, եթէ ձեր հակառակորդի հետ անձնական յարաբերութիւններ չունէք, որը մանաւանդ չէք կարող ունենալ, եթէ նրա հետ մինչև ծանօթ չէք։ Այդ բանը շատ դղեցիկ է հասկանում պ. Դ. Ս. և այդ է պատճառը, որ իր յօդուածի գրեթէ սկզբում ասում է թէ՝ ոչ «Рус. Слово» դասագրքի հետ ծանօթ է և ոչ նոյն իսկ այդ գրքի կրիտիկոս պ. Կովկասեցու հետ։ Ուրեմն գիտացէք, ընթերցողներ, որ ես Կովկասեցու հետ չեմ կարող որ և իցէ անձնական յարաբերութիւններ ունենալ, որովհետև ես նրա հետ մինչև անգամ ծանօթ չեմ, այլ ուզում եմ միայն պ. Տէր-Դաւթեանցի աշխատութիւնը գնահատել... Ցեռոյ աշխատում են ցոյց տալ, որ ընդհակառակը, հակառակորդն է կողմնապահ։ Եթէ Կովկասեցին իր հաշիները չունենար, նա վատ չէր խօսի այն գրքի վրա, որի հետ նա ծանօթ չէր։ Ապացոյց՝ Կովկասեցին ասում է, որ դասագրքի երկրորդ բաժնի բոլոր 29 դասերը բոլորովին միակերպ են։ Եթէ նա ծանօթանար դասագրքի հետ, նա կը տեսնէր, որ մինչև 18-դ դասը ուրիշ է, իսկ 17-ից մինչև վերջը ուրիշ։ Պարոնը (Կովկասեցին) ասում է պ. Դ. Ս., երևի, աւելի հարկաւոր է համարել չը կարդացած գրքի վրա վատ գրել, քան թէ կարդալ և ճշմարիտն ասել։ (Մենք ներքև կը հաստատենք որ ոչ թէ մենք ծանօթ չենք դասագրքի հետ, այլ դուք ինքներդ, պ. Դ. Ս., կամ թէ ծանօթ էք այդ դասագրքի հետ և դիտմամբ մոլորեցնում էք ընթերցողին)։

Ուրեմն առաջին քայլն արած է։ Այժմ հարկաւոր է ցոյց տալ, որ հակառակորդը ոչ թէ ոչինչ բանից տեղեակ չէ, այլ մինչև անգամ լոգիկայից զուրկ է։ Այս դէպքում ահա ինչով է պ. Դ. Ս. ցոյց տալի Կովկասեցու լոգիկայից զուրկ լինելը։ «Երևելի լոգիկա ունի պ. Կովկասեցին», ասում է պ. Դ. Ս., Կովկասեցու խօսքերով «Դասագրքի երկրորդ մասը ամենաէականն է, և այդ պատճառով ամենավատն է». չը գիտենք «ամենաէականն» է պատճառ, որ «ամենավատն» է, թէ «ամենավատն» է պատճառ որ «ամենաէականն» է։ Զարմանալի սուր միտք էք ունեցել, պ. Դ. Ս., որ Կովկասեցու այդ խօսքերը նշանակում են հետևեալը. պ. Տէր-Դաւթեանցը կարծես դիտամբ աշխատել է, որ իր դասագիրքը որքան կարելի է վատ լինի և այդ է պատճառը, որ, դասագրքի ամենաէական մասն—ամենավատն է։»

Այժմ հասկանում էք, պ. Դ. Ս.։

Պ. Ս.-ին, ի հարկէ հարկաւոր էր նոյնպէս ասել թէ Կովկասեցին անաղնիւ է, աչքակապութիւն է անում և այլն և այլն, այսինքն Կովկասեցին ոչ թէ որ և իցէ գիտութիւնից և լոգիկայից զուրկ է, այլ նրա մէջ բարոյականութեան մինչև անգամ

քանի ստիպէնդիատներ պահվէին Մոսկվայի համալսարանում։

Եւ ի հարկէ բոլորն էլ իրանց արած հերոսութիւնից շատ գոհ վերադարձան տուն և իրանց ընտանիքում պատմեցին թէ ինչ մեծ բան են արել....

Իսկ գեղեցիկ և ազատամիտ ճառեր խօսելը ի հարկէ ոչինչ չարժէ....

Երևի ուսողներից ամեն մէկը բացի 8 ռուբլուց մի երկու ռուբլ էլ ծախսեց գինու աւելորդ շիշի, սիգարների, ֆայէտոնի վրա և եթէ հաշուենք որ ճաշին 200 մարդ էին ներկայ գտնվել և ամեն մինը այն օրը մի 10 ռուբլ ծախսեց իր փորի վրա, աւելի լաւ կը լինէր նոյն իսկ այդ դուռմարը, այսինքն երկու հարիւր անգամ 10 ռուբլ, որ կանէ 2000 ռուբլ, փոխանակ կլուբի բուֆետին տալու, նուիրէին ստորագրութեամբ մի բարեգործական նպատակին, կազմէին այդ փողից մի որ և է մարդասիրական գործի մայրագումարը։

Բայց մեր ինտելիգէնցիան այդ իդէալիստութիւն չէ հասկանում, նա պահանջում է իր տուած դրամի փոխարէն գոնէ կուշտ ուտելու և լաւ խմելու։

Եւ այդ տեսակ մարդիկ իրանց թոյլ են տալիս բարձր, մարդասիրական գաղափարներով լի ճառեր խօսել։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շաբաթ գիշեր, յունվարի 12-ին մի սաստիկ յանգուգն գողութիւն է կատարվել Թիֆլիսի Դվորցովի փողոցում գտնված Արծրունու Գալէրէում։ Շինութեան տակով անցնում է անմաքրութեան խողովակ, որ միանում է Երևանեան հրապարակի վրա քաղաքային անմաքրութեան խողովակի հետ։ Խողովակը երեք աղիւսի հաստութեամբ մի թաղ ունի և բաժանվում է քաղաքային խողովակից մի հաստ երկաթեայ վանդակով։ Գողերը մտան խողովակը, քանդեցին երկաթեայ հաստ վանդակը, ծակեցին թաղը երկու տեղ՝ պ. Պոզարջեանցի ծխախոտի խանութի տակ և պ. Դաւիդովի մահուդի մագազինի տակ, սղոցեցին յատակի տախտակները Պոզարջեանի խանութում և մտան խանութը, որտեղից գողացան պատուհանի մօտ բանող հայ ժամագործի բոլոր ոսկեղէն և արծաթեղէն առարկաները և բաւական շատ ծխախոտ։ Դաւիդովի խանութի յատակի տախտակները դեռ չը կարողացան սղոցել։ Անտառակոյս գողերը այդքան աշխատանք մի գիշերվայ մէջ չէին կարող կատարել, այլ պէտք է մեր կարծիքով, գոնէ մի շաբաթ բանէին դեռնի տակ։ Խողովակի մէջ գտան քանքանչիների մի շապիկ և ջրի մի կաւէ աման և ուրիշ իրեղէններ։ Գողերը անհետացել են, բայց դատաստանական քննութիւնը նշանակված է։

—

Շնորհակալութեամբ ստացանք կ. Պոլսի Վ. Ց. Մարգարեանի տպարանում 1879 թվին տպված և պ. Ն. Ձիվանեանի աշխատասիրած «Առ ձեռն բառարան յատուկ անուանց»։ Գիրքը բաժանված է երկու մասի վրա՝ ընդանուր և հայոց յատուկ անուններ։ Հայոց մասը մանաւանդ փոքր և անկատար է։ Պատմական և աշխարհագրական անունները շատ թերի կերպով բացատրված են իսկ ժամանակակից նշանաւոր անձանց մասին յայտնված չէ թէ որտեղ և երբ են ծնվել, ինչ դասակարգի մարդիկ են եղել և ովքեր են եղել նրանց ծնողները, վերջապէս ինչ տեսակ և որտեղ ուսում են ստացել։

—

Պ. Ա. Երիցեանի դասախօսութիւնը, որ պէտք է լինէր յունվարի 16-ին, յետ ձգվեցաւ։

Երէկ, յունվարի 17-ին Թիֆլիսի հայոց մշտական խումբը ներկայացրեց Ամարային թատրոնում Էմիլ դը-Ժիրարդէնի «Մի կնոջ տանջանքը», որ թարգմանեց հայերէն լեզուով պ. Աբգար Յովհաննիսեանը։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են։ «Կովկասեան ուսումնարանական հոգաբարձու պ. Եանովսկի այս տարի այցելելով Ախալցխայի դաւառական ուսումնարանը խնդրում է հայ աշակերտներից, որ երգեն մի հայոց երգ։ Երբ ստանում է պատասխանը թէ չը գիտեն, անմիջապէս հրամայում է այդ օրից ռոճիկ նշանակել և ուսուցիչ վարձել հայոց երգեր սովորեցնելու։ Քաղաքագլուխ պ. Գեղամեանց ներկայ գտնվելով այդտեղ, անմիջապէս նշանակում է քաղաքի կողմից ևս 10 ռուբլ ամսական հայոց երգեցողութեան ուսուցիչ վարձելու համար։ Պ. Եանովսկի հմուտ մանկավարժ լինելով յայտնել է այն միտքը որ մայրենի լեզուով երգը ունի մանուկների համար մանկավարժական զարգացուցիչ նշանակութիւն։ Այս տարուց արդէն կը լինի այդ առարկան պարտաւորեցուցիչ դաւառական դպրոցում։»

—

Մենք իմացանք Պոզարջեանի խանութում կատարված գողութեան մասին հետևեալ մանրամասները։ Ծխախոտ գողացվեցաւ 100 ռուբլ գումարի իսկ ժամագործի ոսկեայ և արծաթեայ իրեղէններից միայն մի մաս գողացան, այսինքն նրա սեփական և դեռ չը ծախված իրեղէնները, իսկ պատուիրած իրեղէններին ձեռք չը տուին, երևի գըտած չը լինելով այն պահարանը, որտեղ պահված էին այդ իրեղէնները։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻ հայ հասարակութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը։ «Ախալցխայի հասարակութիւնը խնդրում է հայ լրագիրներին մատնացոյց անել ընդունելի երգերի և նոտարանի (книга нотъ) վրա, որ նոցա պակասում է և արգելք է լինում այդ առարկայի սկսվելուն դաւառական դպրոցում։»

—

Անցեալ 1879 թվին յունվարի 15-ին «Մշակը» ունէր արդէն 700 բաժանորդ, իսկ այս տարի յունվարի 15-ին մենք ունէինք միայն 550 բաժանորդ, ուրեմն 150 պակաս, քան թէ անցեալ տարի։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՒՐՔԻԱ

—

«Մշակի» խմբագրութիւնն այս օրերս ստացաւ «L'article 61» վերնագրով բրոշիւրի երկրորդ հատորը,—որ ներկայացրած է էրզրումցի մի հայ պատգամաւորից Հայաստանի և Քիւրդիստանի անգլիական հիւպատոս Տրբոտսէրին։ Հարկաւոր ենք համարում այդ բրոշիւրից մի քանի քաղուածքներ անել։

«Մի քանի կանայք բռնաբարվելով խլամութեան են դարձրած։ Օրինակ Պէկէրիչ գիւղում երկու երիտասարդ հայ քոյրեր բռնաբարվել են երկու թիւրք Ահմուդ և Իսմայիլ Տուղլաջի եղբայրներից։ Հայերի բողոքի հիման վրա երկու եղբայրները տարվում են Էրզրում, բայց նրանք այնտեղից վերադառնում են առանց դատապարտութեան։ Ցետոյ, մի օր երկու եղբայրներից մէկը մեծահանդէս հարսանիքով ամուսնանում է փոքր քրոջ վրա մինչդեռ թիւրքաց օրէնքը խիստ կերպով պատժում է նրանց, որոնք բռնաբարում կամ փախցնում են աղջկերանց կամ կանանց։

«Մի ամիս սրանից առաջ Դէօկդաշ կոչված գիւղում, որի մէջ միայն երկու հայ գերդաստան կայ, փախցրել են երկու երիտասարդ աղջիկներ, որոնցից մէկի հայրը վերջին ժամանակներս սպանվել է։ Մինչև այժմ ոչ մարդասպանն է գտնվել, և ոչ յափշտակողները։

Նոտ անգամ պատահել է, որ թիւրքերը օրինաւոր տէրեր են դարձել այն հողերի, որոնք պետական մուրհակներով (թապու) ծախված են եղել այս կամ այն հայի վրա։ Թիւրքերը սպառնալիքներով ու զանազան աններելի եղեռնագործութիւններով, պատահում էր, որ մինչև անգամ սպանութեամբ խլում են հայերից թապուները, և այդպէսով տէր են դառնում հայերի կալուածներին։ Հայերը զուր են բողոքում, որովհետև շէրին (դատաստան) միայն մուսուլմանների վկայութիւնն է ընդունում։ բայց եթէ նրանք փոքր ինչ նեղութիւն կրեն նայել պետական մատեանները,

---

նշոյլ չը կայ։ Ուրեմն՝ այդպիսի մարդու խօսքերին միթէ կարելի է հաւատ ընծայել։ Հիանալի միջոցներ էք գործ ածում, պ. Դ. Ս., ձեր խօսքերն աւելի կարիչ ձևացնելու համար։

Վերջապէս այդ տեսակ պարոնները, ինչպէս վերև ասացի, իրանց խօսքերը հաստատելու համար մեծ յոյսեր են դնում մի քանի գիտնականների լոկ անունների վրա։ Ո՞ւմ անունը ասես չը կապեց պ. Դ. Ս. պ. Տէր-Դաւթեանցի «Рус. Слово»-ի հետ, Զանազան Բօբէրտսոններ, Բոլցներ, Շօպէներ և այլն, և այլն։ Երբ կը դարձնանք մեր յօդուածի երկրորդ մասին, այնտեղ մենք ցոյց կը տանք ծանօթ էր պ. Տէր-Դաւթեանցը և նոյն իսկ պ. Դ. Ս.-ի վերև յիշած աշխատութիւնների հետ թէ ոչ։

Մի քանի լատիներէն խօսքեր «ապրիորիներ», «տերբրանկօդնիտաներ» և այլն, մի քանի թուանշաններ (թէև անճիշդ, միայն թող լինի) այդ տեսակ պարոնների միջոցներից ամենաղօրեղներն են։

Սրանով վերջացնում եմ վերև յիշած տիպի նկարագրութիւնը։

Այժմ մենք քննենք թէ պ. Դ. Ս. և թէ պ. Տէր-Դաւթեանց որքան ծանօթ են Բօբէրտսոնի, Բոլցի և այլոց հետ, և «Рус. Слово»-ի յօրինողը որքան ճշդութեամբ հետևել է Բօբէրտսոնի և Բոլցի մէթոդին։ Մի և նոյն ժամանակ կը պատասխանեմ պ. Դ. Ս.-ի յօդուածի ուրիշ մասերին, միայն մի կողմ դնելով ոչ Բօբէրտսոնի մէթոդը, այլ իմ անձնաւորութեան վերաբերեալ ամենակեղտոտ խօսքերը։ Մենք կարևորութիւն չունենք այդ միջոցի մէջ, դրան կարող են դիմել պ. Դ. Ս.—ներ և նրանց նմանները։

Այս բոպէիս մեր առաջ դրած է նոյն իսկ Neuer Lehrgang der Deutsch. Sprache von Dr. Boltz. II Aufl. (Բոլցի) ձեռնարկը, որը աչքի առաջ է ունեցել պ. Դ. Ս. իրա յօդուածը գրելիս։ Պէտք է ասած, որ Բոլց աւելի ճշդութեամբ է հետևել Բօբէրտսոնի մէթոդին, քան թէ Լամ կոնստանտէն և ուրիշները։

Բօբէրտսոնի մէթոդը, պ. Դ. Ս., և պ. Տէր-Դաւթեանց, գործնական—տեսական մէթոդն է (լաւ ուշադրութիւն դարձրէք)։ Բօբէրտսոնը մի տեսակ փորձ արաւ ուսուցանել լեզուն գործնականապէս (практически) և տեսականապէս (теоретически) միանգամից. այսպէս նա կապելով լեզուի գործնական և տեսական կողմերը, ստեղծեց նոր մէթոդ լեզու ուսանելու համար, թէպէտ, պէտք է խոստովանած, որ այդ մէթոդը ունի և իր թերութիւնները, որի դէմ յարձակվեցան իր ժամանակ Կէմնից և ուրիշները։ Գլխաւոր թերութիւնը կայանում էր նորանում, որ Բօբէրտսոնին չաջողվեցաւ սերտ կապերով կապել գործնական և տեսական մասերը, այնպէս որ նրա մէթոդի մէջ չը պահպանվեցաւ միութիւնը և նորա մէթոդը դրեթէ երկու ճիւղի բաժանվեցաւ։ Ինչ կը վերաբերի գործնական մասին, շատերը յարձակվեցին նորա բառացի թարգմանութեան վրա, այն պատճառով, որ թարգմանելով ամբողջ նախադասութիւնները բառ առ բառ կարող ենք կատարեալ աբսուրդումին հասնել։ Այսպէս թէ այնպէս Բօբէրտսոնի մէթոդը ունեցաւ շատ լաւ ընդունելութիւն և շատերն սկսեցին հետևել նորան։ Պատճառը, ի հարկէ այն էր, որ Բօբէրտսոնի մէթոդը եղած մէթոդներից համարեա ամենայարմարն էր։ Պ. Դ. Ս. ուզում է հաստատել իբր թէ և Տէր-Դաւթեանցը ճշտութեամբ է հետևել թէ Բօբէրտսոնին և թէ Բոլցին։ Եթէ պ. Տէր-Դաւթեանցը և նոյն իսկ նրա պաշտպանող Դ. Ս. գիտենային Բօբէրտսոնի և Բոլցի մէթոդի ինչ լինելը, նոքա մինչև անգամ չէին համարձակվի ասել, որ «Рус. Слово» դասագիրքը Բօբէրտսոնի և Բոլցի մէթոդովն է յօրինած, որովհետև այդ դասագրքի մէջ տեսական մասի ստուերը մինչև անգամ չը կայ։

Ես չեմ կարող հերքել միայն մի բան, որ թէ պ. Դ. Ս. և թէ պ. Տէր-Դաւթեանց տեսած են Բոլցի վերև յիշած ձեռնարկը և մինչև անգամ թերթել են այդ դասագիրքը մինչև 19-ը երեսի, այսինքն առաջին դասի գործնական մասը, կարծելով, որ դրանով վերջանում է առաջին դասը և մնացած դասերը նոյն տեսակ են յօրինած։ Եթէ պարոնները իրանց նեղութիւն տային և գոնեա մինչև առաջին դասի վերջն էին հասել, այն ժամանակ դրա կը տեսնէին, որ առաջին դասի գործնական մասը մինչև անգամ չարունակվում է, այդ 26—27 երեսի Uebungen (վարժութիւններ), որը ամեն դասի ամենակարևոր մասն է, որովհետև, եթէ ամեն մի դասի առաջին բաժիններում թէ խօսքերի, թէ նախադասութիւնների նշանակութիւնը աշակերտները լաւ չեն ըմբռնել և իւրացրել, այս բաժինը չեն կարող անցնել։ այս բաժինը մի և նոյն ժամանակ հիանալի օրինակներ է տալիս աշակերտներին անցած դասերի մէջ պատահած թէ խօսքերի և թէ լեզուի կանոնների կրկնութեան և նոցա մէջ աւելի վարժուելու համար։ Իսկ ինչ կը վերաբերի պ. Տէր-Դաւթեանցի «Рус. Слово»-ին, այնտեղ ամենևին վարժութիւններ չէք կարող գտնել։ Ամեն դասի նախադասութիւնները առաջ է բերած եփած-պատրաստած թարգմանութիւնով, այնպէս, որ աշակերտները պէտք է անգիր անեն այդ պատրաստ թարգմանութիւնները և դորանով իբր թէ ուսանեն ռուսերէն լեզուն։ Եթէ այդպէս է, պ. Դ. Ս., և պ. Տէր-Դաւթեանց, առաւել լաւ կանէիք, եթէ հայոց երեխանց ձեռքը տայիք ռուսաց- հայերէն բառարան և ստիպէիք, որ նոքա անգիր սերտէին այդ բառարանը. այն ժամանակը նոքա գոնեա ստիպված չէին լինի պ. Տէր-Դաւթեանցի արած բառացի անճոռնի թարգմանութիւններն անգիր անել։ Թող ասէ գոնեա մէկը, որ պ. Տէր-Դաւթեանցի «Рус. Слово» դասագրքի ամենաէական, այսինքն երկրորդ մասը մի տեսակ բառարան չէ։ Այդ է Բօբէրտսոնի մէթոդը. այդ է Բոլցի մէթոդը։

Մենք վերև ասացինք, որ Բօբէրտսոնը իր մէթոդի գործնական մասում տեղն է տուել և բառացի թարգմանութեան, որի դէմ շատերն են յարձակվել, որովհետև, ինչպէս մենք ասացինք, թարգմանելով ամբողջ նախադասութիւններ բառ առ բառ սարսափելի աբսուրդումին կարող ենք հասնել։ Բայց ոչ ինքն Բօբէրտսոնը և ոչ նորա հետևողները հաղիւ թէ այն ծայրահեղութեան են հասել, որին հասել է պ. Տէր-Դաւթեանցը իր բառացի թարգմանութեան մէջ։ Խղճացէք, պ. Դ. Ս., և պ. Տէր-Դաւթեանց, այն ողորմելի հայ մանուկներին, որոնց վիճակված է հետևեալ նախադասութիւնները իրանց մտքում պահել. «раздѣнь меня"—«հանի չորերս ինձ», "другой подъ столомъ»—«միւսը տակին ուղանի», "опоздаетъ въ классъ„—«կուչանայ» մէջ դասատան», "изъ сосѣдняго дома"—«միջից հարևան տան», „побѣжалъ за городъ"—«վազեց դուրս քաղաք» և այն և այլն հազար ու մէկ այս տեսակ նախադասութիւնները։

Ասացէք, ի սէր Աստուծոյ, ում չեն մոլորեցնի այս ամենը, ուր մնայ մեր խեղճ հայ տղայոց....

Էն, որ իմացել էք, թէ Բօբէրտսոնը և Բոլցը բընագիր առաջ բերելուց յետոյ, դիմում են բառացի թարգմանութեան, նոքա և ուրիշները ամեն մի բառը իսկոյն քննում են անալիտիկական ձևով և ապա, այսպէս ցոյց տալով ամեն բառի նշանակութիւնը, առաջարկում են վարժութիւններ, որ աշակերտները կարողանան ընտելանալ իրանց սերտած բառերի մէջ։ Եթէ դուք պ. Դ. Ս., և պ. Տէր-Դաւթեանց, ուշադրութեամբ թերթէք Բոլցի յիշած ձեռնարկի յետևեալ երեսները դուք չէք կարող չը նկատել, որ առհասարակ պատրաստ թարգմանութիւնը արդէն երկրորդ դասից սկսում է նուազել, զորօրինակ՝ երկրորդ դասում դուք կը տեսնէք, որ միայն մի քանի հարցմունքներ են թարգմանած, իսկ երրորդ դասում հարցմունքները բոլորովին թարգմանած չեն, չորրորդ դասի վեցերորդ բուրբիկայում Satzbildung (фразеологія), առաջ են բերած օրինակներ միայն մի եղուով, որ աշակերտները նիւթ ունենան մտաւոր աշխատութեան համար և այլն։ Ասելս այն է, որ Բոլցի ձեռնարկի դասերը դասաւորված են սիստեմատիկական, քայլ առ քայլ անցնելով հեշտից դէպի դժուարը։ Բոլցի ձեռնարկի ամեն դասի գործնական մասը մտաւոր կերակուր է տալիս (վարժութիւնների կողմից) աշակերտներին և նա մի անճոռնի բառարան չէ, որպիսին է «Рус. Слово» դասագիրքը։

Այժմ մենք համոզված ենք, որ թէ դուք, պ. Դ. Ս., և թէ դուք, պ. Տէր-Դաւթեանց, կը վերց-